ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԲԵՄ. ԼՈՒՐԵՐ

Ն.Ս.Օ.Տ.Տ ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԳԱՀԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՏԱՍՆԱՄՅԱԿԻ ՏՈՆԱԽՄԲՈՒԹՅՈՒՆԸ ՀՆԴԿԱՀԱՅ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ

Նոյեմբերի 1-ին Կալկաթայի հայ համայնքը մեծ հանդիսավորությամբ տոնախմբեց Ամենայն հայոց Կաթողիկոս եւ Ծայրագույն Պատրիարք Գարեգին Բ-ի գահակալության 10-րդ տարեդարձը: Հնդկահայ հավատացյալները, Մարդասիրական ճեմարանի սաները, ուսուցիչները եւ բազմաթիվ հյուրեր հավաքվել էին Կալկաթայի Սուրբ Երրորդություն եկեղեցում՝ մասնակցելու տոնախմբությանը, որը նախաձեռնել էին հնդկահայոց հոգեւոր հովիվ եւ Հայոց Մարդասիրական ճեմարանի կառավարիչ՝ Տ. Խորեն աբեղա Հովհաննիսյանը եւ եկեղեցական խորհրդի անդամներ՝ տիկին Սյուզան Ռուբենը եւ տիար Սունիլ Սոբթին:

Օրվա պատարագիչն էր հոգեշնորհ Հայր Խորենը: Պատարագի ավարտին կատարվեց Հայրապետական մաղթանք, այնուհետեւ Հայր սուրբը հավուր պատշաճի քարոզ խոսեց՝ ի մասնավորի նշելով. «…2007 եւ 2008 թվականներին հովվապետական այցեր կատարելով Հնդկաստան՝ Վեհափառ Հայրապետն իր հայրական սերն ու հոգատարությունն է արտահայտել Իր բանավոր հոտին՝ հոգեւոր զարթոնք եւ օրհնություն բերելով Սուրբ Էջմիածնից: Հայրենիքից հեռու, աշխարհի տարբեր կողմերում սփռված յուրաքանչյուր հայ թանկ եւ կարեւոր է Հայոց Հայրապետի համար…: Բառերով դժվար է արտահայտել Նորին Սրբության վեհանձնությունը եւ խոսել նրա անձի ներշնչող ներկայության մասին: Իմ հարգանքը նրա հանդեպ առավել է, քան լոկ բառերը կարող են արտահայտել…»:

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի գահակալության տասնամյակի առիթով Սուրբ Երրորդություն եկեղեցու տարածքում կառուցվել է բարեգործական բուժկենտրոն, որն անվանվել է՝ **Գարեգին Բ Կաթողիկոս բարեգործական բուժարան**: Պատարագից հետո հոգեւոր հովվի նախագահությամբ կատարվեց նորակառույց բժշկարանի օրհնության եւ բացման արարողությունը: Բարեգործական բուժկենտրոնը կծառայի կարիքավորներին: Բուժկենտրոնը կունենա որակավորված բժիշկ եւ բուժքույր: Ծառայությունները կլինեն անվճար՝ հովանավորությամբ Կալկաթայի Սուրբ Նազարեթ Մայր եկեղեցու:

Բուժկենտրոնի բացմանը հաջորդեց տոնի առիթով Հայոց Մարդասիրական ճեմարանի երգչախմբի կողմից պատրաստված համերգային ծրագիրը եւ հյուրասիրություն:

Կալկաթայի Հայոց Մարդասիրական ճեմարան

ՕԾՎԵՑ ՄԱՍԻՍԻ ՍՈՒՐԲ ԳԵՈՐԳ ԵԿԵՂԵՑԻՆ

Նոյեմբերի 1-ին ձեռամբ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագոյն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի օծվեց Մասիսի Ս. Գեւորգ եկեղեցին: Եկեղեցին կառուցվել է բարերարությամբ Գագիկ Ադիբեկյանի եւ Արթուր Աբրահամի, ճարտարապետն է Հրաչ Գասպարյանը:

Օծման արարողությանը ներկա էր ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանը:

Վեհափառ Հայրապետը, առընթերակայությամբ Կ. Պոլսի Հայոց Պատրիարքության միաբան Տ. Շահան արքեպիսկոպոս Սվաճյանի, ԱՄՆ Հայոց Արեւելյան թեմի առաջնորդ Տ. Խաժակ արքեպիսկոպոս Պարսամյանի, Ֆրանսիայի հայոց թեմի առաջնորդ Տ. Նորվան արքեպիսկոպոս Զաքարյանի, Արարատյան Հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ Տ. Նավասարդ արքեպիսկոպոս Կճոյանի, Նոր Նախիջեւանի եւ Ռուսաստանի հայոց թեմի առաջնորդ Տ. Եզրաս եպիսկոպոս Ներսիսյանի, կատարեց օծումը նորակառույց եկեղեցու: Սրբալույս Մյուռոնով օծվեցին եկեղեցու խորանը, մկրտության ավազանը եւ սյուները:

Հոգեշունչ արարողությունից հետո իր օրհնությունը ներկաներին փոխանցեց Ամենայն Հայոց Հայրապետը: Նորին Սրբությունը վերհիշեց հինգերորդ դարում Վարդան զորավարի ասած խոսքերը, թե՝ «Մենք մեզ հայր ենք ընդունում Սուրբ Ավետարանը եւ մայր՝ Առաքելական Սուրբ Եկեղեցին»՝ փառք եւ գոհություն վերառաքելով առ Աստված, որ դարեր անց մեր ժողովրդի զավակները նույն հավատարմությամբ պաշտպանում են իրենց նվիրական սրբությունները՝ հայրերի հավատքը, հայրենի երկիրը եւ աստվածսիրության ապրում իրենց հոգում: «Եկեղեցու կառուցման հետ մենք հավատում ենք, որ հոգեւոր կերտվածքը եկեղեցու պիտի կառուցվի Արարատի մեր հավատավոր զավակների հոգիներից ներս: Եկեղեցու կերտվածքը հոգեւոր բարոյական արժեքներն են, որոնք դարեր շարունակ հատկանշել են մեր ժողովրդին, նրա էությունն ու դիմագիծը: Եվ այսուհետ եւս մեր ժողովուրդը պիտի ապրի՝ իր կյանքը խարսխելով բարոյական արժեքների վրա, որովհետեւ այդ արժեքներով է, որ զորեղ է մեր հոգին, այդ արժեքներով է, որ պիտի կարողանանք շենացնել, բարգավաճ դարձնել եւ հաղթանակների առաջնորդել հայրենական մեր կյանքը», - նշեց Ամենայն Հայոց Կաթողիկոսն իր խոսքում:

Վերջում Վեհափառ Հայրապետն իր գնահատանքն ու օրհնությունը փոխանցեց բարերարներին ու նրանց ընտանիքի անդամներին՝ նրանց կարեւոր եւ օրհնյալ նախաձեռնության համար:

Իրենց սրտի խոսքն ասացին նաեւ բարերարներ Գագիկ Ադիբեկյանն ու Արթուր Աբրահամը, որից հետո գեղարվեստական հայտագրով հանդես եկան Մասիսի մշակույթի դպրոցի սաները:

Արարողությանը ներկա էին նաեւ մարզային ու տեղական իշխանությունների

ներկայացուցիչներ, Մայր Աթոռում անցկացվող Թեմական ներկայացուցչական ժողովի մասնակիցներ եւ հարյուրավոր հավատավոր մասիցիներ:

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

ՀԱՎԱՏԻ ՆՎԻՐՅԱԼՆԵՐԻ ՎԻՆՁՈՐՅԱՆ ՏՈՆԱԿԱՏԱՐՈՒԹՅՈՒՆ «ԿԵՆԴԱՆԻ ՄՈԼՈՐԱԿ» ԹԵՄԱՅՈՎ

Նոյեմբերի 2-4-ը Վինձորյան պալատում (Մեծ Բրիտանիա) Էդինբուրգի դուքս Նորին Գերազանցություն արքայազն Ֆիլիպի նախաձեռնությամբ եւ Միավորված Ազգերի Կազմակերպության գլխավոր քարտուղար Բան Կի-Մունի մասնակցությամբ տեղի ունեցավ «Կենդանի մոլորակ» թեմայով Հավատի նվիրյալների Վինձորյան տոնակատարությունը: Այս միջոցառմանն իրենց մասնակցությունն էին բերել ինչպես հոգեւոր, այնպես էլ տարբեր կազմակերպություններ ներկայացնող աշխարհիկ առաջնորդներ:

Տոնակատարության ընթացքում քննարկման դրվեցին ժամանակակից աշխարհի այնպիսի կարեւոր հիմնախնդիրներ, ինչպիսիք են բնական պաշարների չարաշահումը եւ դրա հետեւանքով առաջացած մթնոլորտի գլոբալ տաքացումը, ինչպես նաեւ՝ կրոնի վրա հիմնված էկոպիտակավորված համակարգերի ստեղծումն իսլամական, հինդուիստական եւ հուդայական իրականության մեջ, բոլոր տեսակի կրոնական կառույցների կանաչապատմանը, անձեռնամխելի անտառների պահպանմանը, բարոյական ավանդների զարգացման քաղաքականությանը, բնապահպանության հարցում հավատի գերակշռող դերի մասին ուսուցողական ծրագրերի մշակմանը վերաբերող թեմաներ:

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնությամբ այս միջոցառմանը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը ներկայացնում էին Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու Արագածոտնի թեմի առաջնորդական տեղապահ Տ. Մկրտիչ վարդապետ Պռոշյանը եւ Հայաստանյան Կլոր սեղան բարեգործական միջեկեղեցական հիմնադրամի տնօրեն դոկտոր Կարեն Նազարյանը:

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

ՕԾՎԵՑ ՇՈՇԿԱՎԱՆՔԻ Ս. ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑԻՆ

Նոյեմբերի 12-ին Հայ Առաքելական Եկեղեցու Արցախի թեմի առաջնորդ Տ. Պարգեւ արքեպիսկոպոս Մարտիրոսյանի ձեռամբ օծվեց Շոշկավանքի Ս. Աստվածածին եկեղեցին: Շոշկավանքը, որ իբրեւ սրբավայր հայտնի է դեռեւս ԺԳ դարից, խոնարհվել էր խորհրդային իշխանության տարիներին: Եկեղեցին հիմնովին վերանորոգվել է ԼՂՀ պաշտպանության նախկին նախարար Սամվել Բաբայանի

ու նրա եղբոր՝ Կարո Բաբայանի բարերարությամբ, իսկ փարածքի բարեկարգման ու հարակից շինությունների կառուցման ծախսերը հոգացել է արցախցի գործարար Տիգրան Խաչատրյանը:

Գերաշնորհ Պարգեւ Սրբազանն Արցախի թեմի հոգեւոր դասի հետ վաղ առավոտից սկսեց եկեղեցու օծման արարողությունը: Օծվեցին Ս. Սեղանը, Աստվածամոր սրբապատկերը, Խորանի՝ չորս Ավետարանիչների անունները կրող սյուները, Մկրտության ավազանն ու եկեղեցու մնացյալ սյուները:

Օծման արարողության ավարտից հետո Շոշկավանքում երկար տարիների ընդմիջումից հետո Տ. Պարգեւ արքեպիսկոպոս Մարտիրոսյանի ձեռամբ մատուցվեց անդրանիկ Պատարագը: Պատարագի սրբազան արարողությանն իրենց անմիջական մասնակցությունն էին բերում բազմաթիվ ուխտավոր հայորդիներ, որոնց ձայնակցությունը Պատարագի հոգեպարար երգեցողությանը վերջնականապես վերականգնում էր երկար տարիներ եկեղեցու կամարների ներքո լռած աղոթքի ձայնն ու զորությունը:

Հընթացս Սուրբ Պատարագի խոսված քարոզում Արցախի թեմի առաջնորդը շեշտեց, որ եկեղեցին տուն է աղոթքի, սակայն այդ տանը աղոթքը լռել էր, քանի որ եկեղեցին անաստվածության տարիներին ենթարկվել էր նույն փորձությանը, ինչին՝ մեր ողջ ժողովուրդը՝ կիսելով նույն ճակատագիրը: Սակայն արցախյան ազատագրական պայքարով թոթափվեց նաեւ անաստվածության լուծը, եւ Տերը հաղթանակ շնորհեց ու օրհնեց, որ վերականգնենք մեր սրբավայրերը: Պարգեւ Սրբազանն ընդգծեց, որ այդ հաղթանակի ձեռքբերման գործում մեծ դեր է ունեցել նաեւ այդ սրբավայրերում հնչած դարավոր աղոթքը, ուստի կոչ արեց անձանձրույթ աղոթքի՝ հանուն մեր երկրի, հավատքի, խաղաղության եւ հանուն մեր սերունդների:

Սրբազան արարողությանը ներկա էին ԼՂՀԱԺ նախագահ Աշոտ Ղուլյանը, ԼՂՀ Գերագույն դատարանի նախագահ Արարատ Դանիելյանը, ԱԺ պատգամավորներ, բարձրաստիճան պաշտոնյաներ, բազմաթիվ հավատացյալներ:

ԱՐՑԱԽԻ ԹԵՄԻ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Տարվույս նոյեմբեր 20-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում, նախագահությամբ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի, տեղի ունեցավ Գերագույն Հոգեւոր Խորհրդի ժողով, որի ընթացքում քննության առնվեց Վիրահայոց թեմի Մուղնեցոց Սուրբ Գեւորգ հայոց եկեղեցու փլուզման խնդիրը:

Ավանդության եւ գրավոր մի քանի աղբյուրների հիշատակությանց համաձայն Թիֆլիսի Մուղնեցոց Սուրբ Գեւորգ եկեղեցին կառուցվել է 1356 թ.: Այստեղ, ավանդության համաձայն, գտնվել է նաեւ Արագածոտնի Մուղնի գյուղից բերված Սուրբ Գեւորգ զորավարի գանգի մասունքը: Եկեղեցին մի քանի անգամ վերանորոգվել է ԺԷ եւ ԺԸ դարերում: Սուրբ Գեւորգ եկեղեցում պահպանվելիս են

եղել Սուրբ Հակոբ Մծբնա Հայրապետի, Սուրբ Ղուկիանոսի եւ Սուրբ Թեոդորոսի մասունքները: Բացի մեծ գմբեթից եկեղեցու երեք անկյուններում դրսից շինված էին երեք փոքր գմբեթներ, որոնցից մեկը եկեղեցու զանգակատունն էր:

Խորհրդային տարիներին եկեղեցին փակվում է եւ վերածվում ազգագրական թանգարանի, ապա պահեստի, իսկ 1990 թ., վթարային որակավորմամբ, վերջնականապես փակվում է:

Մուղնեցոց Սուրբ Գեւորգ եկեղեցին մեկն էր այն հինգ եկեղեցիներից, որոնք Վիրահայոց թեմին վերադարձնելու նպատակով Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի եւ Վիրահայոց թեմի անունից բազմաթիվ անպատասխան դիմումներ էին հղվել Վրաստանի ղեկավարությանը, Վրաց պատրիարքարանին, միջազգային կազմակերպություններին: Մուղնեցոց Սուրբ Գեւորգ եկեղեցին, ըստ Վիրահայոց թեմի մամլո դիվանի, Թիֆլիսի Նորաշեն, Շամխորեցոց Սուրբ Աստվածածին, Սուրբ Նշան, Երեւանցոց Սուրբ Մինաս եւ Ախալցխայի Սուրբ Նշան եկեղեցիների հետ Վրաց պատրիարքարանի կողմից հռչակվել է վիճելի, որով եւ արդարացվում է դրանք Վիրահայոց թեմին չվերադարձնելու մտադրությունը: Հարկ է նշել, որ Մուղնեցոց Սուրբ Գեւորգը երկրորդ փլուզված եկեղեցին է 1989 թ. ավերված Շամխորեցոց Սուրբ Աստվածածին եկեղեցուց հետո:

Հետաքրքիր է, որ փլուզված երկու եկեղեցիներն էլ պատկանում են այն հայկական եկեղեցիների թվին, որոնք վերադարձնելու հայց էր ներկայացրել Վիրահայոց թեմը: Այս պարագային կասկածից վեր է, որ Վրաց կառավարությունն ու պատրիարքարանն այդքան էլ չեն անհանգստանում եկեղեցիների արտաքին ճարտարապետական վիճակով, որովհետեւ եկեղեցու վերջնական փլուզմամբ, ինչպես ժողովուրդն է ասում, «համ գլխից են ազատվում, համ էլ՝ գլխացավից»:

Առ այս ԳՀԽ-ն ընդունել է պաշտոնական հայտարարություն, որն ամբողջությամբ ներկայացնում ենք ստորեւ:

«Գերագույն Հոգեւոր Խորհուրդը ցավով է հաստատում Վրաստանի մայրաքաղաք Թբիլիսիում 1356 թվականին կառուցված Մուղնեցոց Սուրբ Գեւորգ հայոց եկեղեցու փլուզման փաստը:

Գերագույն Հոգեւոր Խորհուրդն ափսոսանքով է արձանագրում, որ անարդյունք մնացին Հայաստանի Հանրապետության իշխանությունների եւ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի գործադրած տարիների ջանքերը Վրաստանի Հանրապետության իշխանությունների եւ Վրաց Ուղղափառ Եկեղեցու հետ բանակցությունների ճանապարհով կարգավորելու Վիրահայոց թեմի իրավաբանական անձի կարգավիճակի եւ հայոց եկեղեցիների վերադարձման հարցերը: Հիշյալ խնդիրների կարգավորման մեջ վրացական կողմի դրսեւորած հանիրավի ձգձգումների հետեւանքներից է նաեւ Սուրբ Գեւորգ եկեղեցու փլուզումը, որի ամբողջ պատասխանատվությունը կրում են Վրաստանի Հանրապետության իշխանությունները եւ Վրաց Ուղղափառ Եկեղեցին: Հայկական սրբավայրերի պահպանության ուղղությամբ վրաց պետության դրսեւորած անտարբերությունը որեւէ կերպ չի համապատասխանում բարիդրացիական

հարաբերություններ հաստատելու, համամարդկային արժեքներին հավատարիմ լինելու, երկրում ազգային փոքրամասնությունների իրավունքները հարգելու եւ նրանց պատմամշակութային ժառանգությունը պահպանելու ուղղությամբ վրաց պետության կողմից մշտապես հնչեցվող հայտարարություններին եւ միջազգային հանրության առջեւ ստանձնած պարտավորություններին:

Գերագույն Հոգեւոր Խորհուրդը կոչ է ուղղում Վրաստանի Հանրապետության իշխանություններին եւ Վրաց Ուղղափառ Եկեղեցուն անհապաղ քայլեր ձեռնարկել Վրաստանի Հայոց Թեմին իրավաբանական անձի կարգավիճակ տրամադրելու, Վրաստանի հայկական եկեղեցիները Վիրահայոց թեմին վերադարձնելու՝ վիրահայության ազգային-եկեղեցական կյանքի բնականոն կազմակերպման եւ հայկական սրբավայրերի ապահով պահպանության համար»:

«ՍՈՒՐԲ ՊԱՏԱՐԱԳՆ ԱՇԱԿԵՐՏԻ ՇՈՒՐԹԵՐՈՎ» ԾՐԱԳՐԻ ԵԶՐԱՓԱԿԻՉ ՓՈՒԼԸ

Ի նշանավորումն Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Հայրապետի գահակալության տասնամյակի՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Քրիստոնեական դաստիարակության կենտրոնը ՀՀ հանրակրթական դպրոցներում նախաձեռնել էր «Սուրբ Պատարագն աշակերտի շուրթերով» ծրագիրը:

Ծրագրի աշխատանքները մեկնարկել էին Վեհափառ Հայրապետի օրհնությամբ եւ ՀՀ կրթության եւ գիտության նախարար Արմեն Աշոտյանի հրահանգով: Ծրագիրը, որի նպատակն էր աշակերտներին հաղորդ դարձնել Սուրբ Պատարագի խորհրդին եւ երգեցողությանը, նախատեսված էր իրականացնել երեք փուլով՝ տարածաշրջանային, մարզային եւ հանրապետական:

Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եղեկեցու Հայաստանյան թեմերի, տեղական ինքնակառավարման մարմինների կրթության բաժինների եւ նրանց կողմից լիազորված անձանց անդամակցությամբ ձեւավորված տարածաշրջանային հանձնախմբերը, մասնակցելով միջոցառումներին, տարածաշրջանների մասնակից դպրոցներից ընտրել էին լավագույններին, որոնք էլ մասնակցեցին մարզային փուլին: Հաղթող ճանաչված դպրոցները ներկայանալու են հանրապետական՝ եզրափակիչ եռօրյա մրցույթ-փառատոնին, որն անցկացվելու է Էջմիածնի Հայորդյաց տանը, դեկտեմբերի 1-3-ը, ժամը 11^{00}-ից:

Եզրափակիչ փուլի ավարտին ընտրվելու են հաղթողներ «Լավագույն սցենար», «Լավագույն կատարում», «Լավագույն բեմադրություն» անվանակարգերում: Գլխավոր՝ «Հայրապետական մրցանակ»-ը, շնորհվելու է լավագույն միջոցառում ներկայացրած դպրոցին:

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ